WIEN 27.5.96 9-10 V

ԱՍՏՂ-ԱՐԵՎԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղրն. վեցամսեան 6 ղ.
Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ.
Ռուսաստան 3 ռուբլի. վեցամսեան 2 ռուբլի.
Օտար երկրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք:
Հասցէ Téhéran Rédaction ASTCH-AREVELIAN

Թիւ 2
ՀՈՐԵՔՇԱԲԹԻ 10 Յունվար
1896
ԱԹԱՌԻՆ ՏԱՐԻ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի և տօն օրերն:
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով. խուրքանչիւր քառն 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր քարեկամներին. Մեր թղթակիցներին և գործակալներին. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեռած տարը. Հայի նոր տարին. Գերի մնալները. Երեկոյթների հրեշտակները. Աստղ-Արևելեանի փայլը. Թէհրանի Սէր ընկերութիւնը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր- ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. Հեռագիրներ. Աստղ-Արևելեանի պատասխաններ. ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մրցումն. Սոխակը:

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

«Աստղ-Արևելեանի» խմբագրութիւնը տրդէն պատիւ ունեցաւ նոյն իսկ թերթիս առաջին համարով իւր շնորհակալութիւնը յայտնել այն բազմաթիւ քարեկամներին, որոնք թէ հեռուից և թէ մօտից աճապարել էին «Աստղ-Արևելեանի» ծագումը շնորհաւորել, փոքրաւոր խորհուրդներ տալ, նրա ղեկավարող մարմնին և այլն և այլն: Մինչև այսօր էլ շարունակւում են այդ նամակները: Դրանցից շատերի բովանդակութիւնը գրեթէ միևնոյնն է. ամենքը միաձայն խնդրում են, որ «Աստղը» բարձրացնենք մի այնպիսի դիրքի վրայ, որ արժանի լինի իւր ճակատին կրելու այդ մեծ անունը, որ կարողանայ զոհացումն տալ պարսկահայի անթիւ և անհամար պահանջներին: Մի քանիսն էլ, իրաւացի կերպով նկատում են, թէ ,,հունձը շատ է և մշակները սակաւ,,, և կամենում են, որ մենք բազմապատկենք մեր ջանքը: Շատեր խնդրում են, որ նա չը նմանի այս ինչին և այն ինչին.... Ի հարկէ այսպիսի նամակներ քաջալերական են, և մխիթարական՝ որոց մէջ աչքի են ընկնում Հայ կնոջ ստորագրութիւններ ևս :

Ժողովրդի պահանջը խիստ արդար է և իրաւացի. մենք ձեռք առինք մի այնպիսի ծանր գործ. որպիսին է լրագրութիւնը, մի այնպիսի ժողովրդի մէջ, որ ահագին ասպարէզներով յետ է մնացել իւր եղբայրներից, այդ հեռաւորութիւնը կտրելով նրանց հասցնելու համար հարկաւոր է դերբնական ջանք և զոհողութիւն, սակայն մենք համոզուած ենք, որ պարսկահայերի մէջ պակաս չեն կայծեր, որոնք թաղուած են մոխրի տակ, յետ անելով այդ մոխիրը և արծարծելով այդ կայծերը հաւատացած ենք, որ կը յաջողի մեզ շոգի գոյացնել շոգեշարժ մեքենայի կաթսայի մէջ և այդ շոգիի զօրութեամբ, հարթուած և ձգուած ռէլսերի վրայից, պիտի սլանան հասարակաց յառաջադիմութեան կառքի անիւները. սակայն մենք ևս պահանջներ ունինք այդ ժողովրդից, և տեսնենք թէ ինչպէս է կատարումը տալու նրանց:

Մեր առաջին պահանջն է խիզճ և արդարութիւն քննադատութեան մէջ, հեռու վանել նախապաշարումի և խնամիական կուսակցութեան զզուելի ոգին, որ սպանում է մեզանում ամեն մի ազնիւ գործ դեռ իւր սաղմի մէջ և դնէ «Աստղը» նիւթականապէս մի այնպիսի անշարժ պատուանդանի վրայ, որ նա չստիպուի առժամանակ մի փայլելէն վերջ խաւարիլ, առանց հետք թողնելու:

«Աստղի» աշխատակիցները չեն սպասկալում ժողովրդից նիւթական վարձատրութիւն, «Աստղը» չէ հրատարակւում վարձկան ոյժերով. այլ, ինչպէս Հայկական միւս բարենպատակ ազգային հաստատութիւնները, այս ծանր գործն ևս ջանց ուսերի վրայ առին մի խումբ սիրողներ. մենք, ցանկանում ենք միայն, որ նա օգնէ Աստղ-Արևելեան ընկերութեան, որ բաւականաբար յանձնառու թերթիս տպագրութեան նիւթական պէտքը մատակարարելու հոգը: Այդ կողմից անդորը վիճակի մէջ դնելով մեր միտքը, այնուհետև հոգւով սրտով պիտի նուիրուենք նորա բարգաւաճման, և համոզուած ենք, որ ժամանակի ձեռքը, պատրաստում է մեր և մեր բարեկամների ապագայ յոյսերի պսակը:

Վաղարշակ Բժշկեանց

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

«Աստղ-Արևելեանի» տնօրինութիւնը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՐՑՈՒՄ

Նեղկայ քաղաքակրթուած աշխարհը յառաջադիմել է միայն մրցումով, որի համար պէտք է անսասան եւ երկաթեայ կամք եւ աշխատասիրութեան հոգի: Եթէ քննենք ամբողջ տիեզերքը պիտի տեսնենք թէ երկնային մոլորակները եւ աստղերն էլ ինչպէս մէկը միւսին յետ թողնելով, եւ մրցելով են առաջանում. եւ եթէ նայենք երկրի վերայի արարածներին մեծից մինչեւ ամենափոքր ուղղներին՝ պիտի տեսնենք թէ ինչպէս մէկը միւսից աւելի ճարպիկ եւ ճարտար՝ մրցում են ամեն մէկն իւր շրջանում՝ եւ աշխատութեան ասպարէզում: Սակայն ամենից ճշմարիտ օրինակը որ կարող ենք բերել, հին եւ նոր աշխարհներն են. դարձնենք մեր աչքերը դէպի Ամերիկա, մի՞թէ միեւնոյն բարբարոսարնակ երկիրը չէ որ 400 տարի սրանից առաջ Քոլոմբոս գտաւ իւր նախորդների հետ մրցելու անդարձ մտքով եւ այնուհետեւ մի հալածեալ՝ չափ եւրոպացիք, որոնք հալածուելով օրէնքի համար՝ իբրեւ թափառականներ նաւարկելով ովկիանոսների վրայ անցան նոր աշխարհը (Ամերիկա) ուր վառուած մրցման հոգով աշխատեցին եւ զարգացան թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս այնպէս որ իրենց անկախութիւնը փնտռելու ձեռնարկեցին եւ իսկապէս ստացան. ո՞վ երբէք կը խորհէր թէ այդ վայրենաբնակ ընդարձակ երկիրը պիտի լինէր առաջինը իւր մրցման մէջ:

Ո՞վ տուաւ այդ նոր աշխարհին իւր բարձրագոյց թեւերը, նորանոր արուեստներ եւ գիտական գիտերն, կորովի միտք եւ յառաջադիմասէր ոգին, նորա միջի խանդ եւ եռանդ ունեցող երիտասարդները որոնք հմտութեամբ եւ գիտութեամբ բարձրացնելով նորա քաղաքները մոռում են նորան դէպի յառաջադիմութեան գագաթնակէտն, ո՞վ է, ո՞վ այս բոլոր պանչելեաց աղբիւրն, եթէ ոչ մրցումն:

Ահա այս դիտիչ եւ գերբնական զօրութիւնն է որ ստեղծում է միշտ նորութիւն եւ հրաշալիներ, իսկ սոսկալի հակառակ՝ զրեթէ աշխարհիս սկզբից, Ասիան՝ որ բոլոր գիտութեանց եւ արուեստից կեդրոնն էր ուր մարդկութիւնը ստանում էր իւր մտաւոր ու բարոյական սնունդն ու յառաջադիմութեան եռանդագին ոգին, այդ Ասիան՝ որի ծոցում՝ տգէտ Չինացին ծնաւ աստղագիտութիւն եւ նոր խալիֆայանիստ փառատոր Բաղդաղնեղաւ գայն սնանող, ու նոյն գիտութեան աղբիւր եւ կեդրոն, որի հրաշափառ ճառագայթներից կըլուսաւորէին բիւր Յոյն եւ արեւմտեան այլ եւ այլ մտքեր:

Այդ Ասիան կարծես հոգնած իւր դարաւոր աշխատութիւնից, մոռացաւ իւր խանդ ու եռանդ, ու մարեց նորա մէջ մրցման հոգին, կորսնցրեց իւր հնաւոր ընտրած նշանաբանն, որ է յարատեւութիւն եւ յառաջադիմութիւն, եւ այնպէս անծնաւոր եղաւ թուլութեան ու անգործութեան եւ ապա դարձաւ ներկայ դիակնացած անզգան, որ իւր մտաւոր բոլոր ոյժերն ու սնունդն պարզապէս մուրում է իւր սաներից կամ լաւ է ասել մրցակիցներից.....

Ահա տեսնում ենք թէ ինչ հրաշալիքներ է գործում մրցումն, եթէ մի արարած զուրկ է այդ ոգուց կամ այդ զգացումից. նա չի՞ կարող տեսնել յառաջադիմութիւն նա չի կարող վայելել քաղցրութիւն, մ՚իշտ կմնայ նոյն շարժուն եւ իջսող դիակն. նոյն անզգայ եւ անընդունակ մարդասիրաբանաւոն, մրցման հոգին է որ անընդհատ փոփոխութիւններ է առաջ բերում՝ աշխարհիս երեսին. այդ է որ լուսաւորում է մտքերը՝ մշակում է ուղեղները, բացում է դարաւոր գաղտնիքներ, եւ վերջապէս տալիս է մարդկութեան անուանի եւ հռչակաւոր գիտնականներ, զրագէտներ եւ վերջապէս այդ հրաշալի զօրութիւնն է, որ մանելով մանուկն ոչ-ոչ տեղծում՝ երկաթեայ կամք, ու ապողովատեսայ յարատեւութիւն, եւ ապահովում՝ զինքն հիրնկալներին տակեայ պատկով: Որ չկայ մրցում անդ չկայ կեանք: Բուսի ինչու պէտք է մեր երիտասարդութիւնը անհոգ մնայ այդ մասին, թող ամէն մէկն իւր շրջանում՝ եւ բան իւր գիտութեան ու ազգութեան. սակայն

թերթից մի մի օրինակ պիտի ընծայէ բոլոր այն անձերին, որոնք մինչև երեք ամիս իրենց լուրջ և խոհուն յօդուածներով յաջողին մեր վստահութիւնը գրաւել, նաև այն անձանց որոնք աշխատին լրագիրը տարածել, բաժանորդագինները շուտով գանձել և պատրաստ լինին մեր հրահանգների համեմատ գործելու։

Մենք փափագում ենք թղթակիցներ և գործակալներ ունենալ ոչ թէ միայն մեծ քաղաքների մէջ՝ այլ առաւելապէս փոքրիկ և աննշան քաղաքներում, գիւղաքաղաքներում և մանաւորապէս գիւղերում։ Մեր թղթակիցները օրուան կեանքից նիւթ պիտի վերցնեն. թող գրեն տեղւոյն ազգային և ոչ ազգային սովորութիւնների, բարք ու վարքի, վաճառականութեան արհեստների, երկրի և նրա բերքերի, ազգային հաստատութեանց և խնդիրների վերայ. վերացական կամ ուսումնական կեանքն մեծ հրապոյր չունի մեզ համար, մեր լրագիրը հասարակ ժողովրդի սրտին մօտ և հասկացողութեան մատչելի խնդիրներ պիտի դնէ նրա առաջն, որովհետև նրա համար է հրատարակուել և նրան իւր քարշ վիճակից վեր բարձրացնելն է իւր գըլխաւոր նպատակը։

Գալով մեր գործակալներին՝ նրանցից էլ պիտի խնդրենք որ թերթը աշխատին տարածել ոչ թէ միայն նրանց մէջ, որոնց ճաշակը և զգացմունքը բարձր են և յայտնի են իբրև «ազգասէր կամ հայերէն լրագիր կարդացող»՝ այլ առաւելապէս ջանան մուտք գործել հասարակութեան ստորին խաւերի մէջ, որոնք ընթերցանութեան և օրուան խնդիրներից շատ հեռու են և իւրեանց առևտրից, արհեստագործութիւնից և այլ և այլ նոյնատեսակ նախագծեալ զբաղմունքներից դուրս կեանքը ինչ ասել է, չեն գիտեր։

Այս պայմաններով մեզ աշխատակցողներին ուրախութեամբ պիտի ընդունենք։

Նրանք խմբագրութիւնից նուէր պիտի ստանան մի մի օրինակ «Աստղ-Արևելեան». ոչ թէ իբրև վարձ իրենց աշխատութեան, այլ իբրև ապացոյց մեր շնորհակալութեան և երախտագիտութեան.

Իսկ եթէ դրանց մէջ գտնուին այնպիսիներ որոնք փափագին վճարել, այն ժամանակ բաժանորդագնի փոխարէն խմբագրութիւնը նրանց անուամբ թերթից մի օրինակ պիտի նուիրէ ուր որ ինքն յարմար իմանայ, կամ ուր որ վճարողն փափագի ղրկել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՆԱՑԱԾ ՏԱՐՐ

Շատ անգամ պատահել է ինձ կարդալ լրագրաց մէջ ու լսել արտասահմանից նոր հասնող այցելուների բերնից թէ «պարսկահայն իւր ծուլութեամբ և անհոգութեամբ դէպի ազգային գործերն՝ մեռած մի տարր է կազմում հայութեան համար»։

Բայց տեսնենք արդեօք պարսկահայըն ունեցա՞ւ մի միջոց որով կարողանար իւր կենդանութեան նշոյլներն ազգին ներկայացնել և պարզել թէ ինքն էլ սիրտ ու հոգի ունի, եռանդ և ազգի սէր ունի. նա էլ ընդունակ է հայ տարրի վերածնութեան մեծ գործում օգտակարապէս գործելու։ Մարդս գործ կարող է տեսնել միջոցներով միայն։ Եթէ զօրականն իւր զէնքը, վաճառականն իւր դրամագլուխը, նաւապետն իւր նաւը, հողագործըն իւր խոփն ու եզներն չունենայ իրենց արհեստում շատ հմտութիւն ունենալն և մի անկիւնում լռիկ մնջիկ նստել խորհելն շահաւէտ մի արդիւնք չէ կարող յառաջ բերել։ Մարդկային մի ընկերութիւն յառաջ մղելու գլխաւոր միջոցներից մէկն էլ այն հրաշալի մամուլն է, որ դարերի ծալքերում և երկրիս խաւար խորշերում ծածկուած գաղտնիքներն մինչև անգամ մատաղ մանուկների ամենօրեայ թոթովանքների առարկան դարձրեց, և աշխարհիս թէ լոյս և թէ մութ տեղերում գործուած բարիքն կամ չարիքըն հազարաւոր միջոններից տեսնելով մերկանդամ հրապարակ ձգեց բարիքն վարձատրելու և չարիքն նշաւակելու համար։

Սակայն Պարսկաստանի հայն չունէր այդ միջոցն։ Ահա մերձ 25 տարի է որ նա էլ սկսել է սթափուել և շարժել. թմրութեան վարագոյրն այսօր յետ է քաշուել և նա էլ գործել է և գործում է լուսաւորութեան շէնքը կանգնեցնելու համար։

Արտասահմանի համար պարսկահայն մեռած մի տարր է. ինչո՞ւ… արդեօք արտասահման իւր այդ ամբողջ լրագրութեամբ խորհեցաւ երբեմն էլ պըրպտել պարսկահայի ներքին ազգային և ընտանեկան կեանքն. նրանցից ո՞ր մէկն լրջօրէն ձեռք առաւ պարսկահայի մտաւոր վերածնութեան գործն. նրանցից ո՞ր մէկն լսեց այս հեռաւոր Պարսկաստանի մութ անկիւններից եկած բողոքի մրմունջն. ո՞ր մէկն մըտածեց ոգեգրել այս «մեռած տարրին» և կենդանացնել նրան։ համարձակօրէն կասեմ-և ո՛չ մէկն։

Պարսկաստանի հեռաւոր խորշերի մէջ տարագրուած այս «մեռած տարըըն» չկարողացաւ գրաւել իւր արտասահմանի «վառվռուն և կենդանի միւս տարրի» համակրանքն և հետաքրքրութիւնն. մեր ազգային խնդիրներն և ներքին կեանքին վերաբերեալ յօդուածներն շատ քիչ անգամ, գրեթէ ասուպի պէս երևեցան արտասահմանի լրագրութեան մէջ. ինչո՞ւ… որովհետև Թիֆլիսի մէջ աւելի յարգելի են և ուշադրութեամբ պիտի կարդացուին Ախալձխայի, Նախիջևանի և այլ նոյն տեսակ քաղաքների ազգայինների ներքին գործառնութեանց վերաբերեալ յօդուածներն, Պօլսոյ մէջ՝ Ռոտոստոյի, Իզմիրի, Կեսարիայի յօդուածներն քան թէ Թէհրանից, Դավրէժից, Ն. Ջուղայից և հեռաւոր Շիրազից կամ Պուշէռից եկող ազգային խնդիրներ որք արտասահմանի լրագրութեան համար անպէտք և նըրա բաժանորդների քիմքին անախորժ են։

Մենք լաւ գիտենք այդ բանն. «ամեն մարդ իւր համար, Աստուած ամենի համար». մենք էլ մեզ համար պիտի աշխատենք և պիտի ցոյց տանք թէ պարսկահայն մեռած տարր չէ, երբ ինքնաճանաչութեան զգացմունքն կըրում է իւր սրտում։

Այդ մասին «Աստղ-Արևելեանի» խըմբագրական յարգելի ժողովն յուսով եմ թէ պիտի թոյլ տայ ինձ գրել մի քանի յօդուածներ, քանի որ իւր ծագումն էլ այդ ինքնաճանաչութեան զգացման և կենդանութեան մի ապացոյցն է։

Պերճ.

ՀԱՅԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ

95 թուականն էլ անցաւ, մի տարի ևս դարերի գերեզմանն իջաւ. սակայն տեսնենք թէ այդ 365 օրերի հոլովման վախճանի առաջ՝ ինչ հաշիւ է ներկայացնում հայի կեանքը։ Նա ինչպէս է դիմաւորում 96-ին։ Այդ հաշիւը զանազան է և բազմագոյն, իսկ ոչ մեր ժամանակը և ոչ «Աստղ-Արևելեանի» ծաւալը կը ներեն մեզ մի առ մի բացատրելու. սակայն ընդհանուր մի հայեացք։ Թուլասիրտ, վատահոգի երկչոտները՝ վայնասունով, ախ ու վախով են հրաժեշտ տալիս հնին. իսկ նրանք, որ ունին կամքի ոյժ, կորովի հաստատամտութիւն՝ ժպիտը շրթունքներին, ապագայ թաթաուն յոյսերի շողը ճակատներին են դիմաւորում 96 թուականի նոր տարուն։

95 թուականը՝ յիրաւի բաց սրաւ ամեն մի հայի սրտում անմոռանալի վէրքեր, սակայն չենք կարող ուրանալ և նորա մատուցած անփոխարինելի ծառայութիւնք։

Ամեն մի հասկացող հայ ծանօթ է այդ հրաշալի արդիւնքին. պէտք չը կայ կարծեմ մեր բացատրութեան։

Ուրեմն մնաս բարեաւ 95 թուական, գնա հանգչիր դարերի գիրկը, սակայն լաւ իմացիր որ հայը, իւր բոլոր գոյութեան շրջանի մէջ քեզ երբէք մոռանալ կարող չէ, դու պատրաստեցիր նորա վերածնութեան համար մի խանձարուր, որին ապագայ հայը ջերմեռանդութեամբ պիտի մատեցնէ իւր շրթունքները. ուրեմն մնաս բարեաւ կրկնում եմ, թող անջինջ մնայ միշտ քո յիշատակը ամեն մի ճշմարիտ հայի սրտում, թո՛ղ օրհնութեամբ յիշէ նա քեզ, իսկ մենք մաղթենք որ գալ 96 թուականում յաջողուի նրան քաղել քո քաղցրիկ պտուղները, որոց համար այնքան ջանք և զոհողութիւն ի գործ դրաւ.

Ի. Կ.

ԳԵՐԻ ՄԱՄՈՒԼՆԵՐ

Մամուլն է ներկայ դարուս մտաւոր զարգացման գրաւականը. մամուլն է, որ արթնացնում է մի ժողովրդի թմրած մտաւոր կարողութիւնները, մամուլն է, որ պատռում է խաւարի քողը, ազատում է մարդկութիւնը կեղծ բարեկամներից, մատնանիշ անում ազնիւը, հարազատը, ճշմարիտը։

Մամուլի բացակայութեանը պէտք է վերագրել այն բոլոր ալեկածները, որ պարսկահայի մտաւոր զարգացման պատմութեան տխուր էջերն են կազմում։ Որովհետև ուր չը կայ մամուլ, այնտեղ չը կայ և յառաջադիմութիւն. ուր չը կայ մամուլ, չը կայ այնտեղ և լոյս. ահա այս շօշափելի փաստերն էին, որոնք իրաւունք տուին Գիւթէնբէրգին մարդկութեան մեծ բարերարը հռչակուելու։

Հնդկաստանի մեր եղբայրները ապրելով աւելի լուսաւոր մի մթնոլորտում դեռ շատ հին ժամանակներն իսկ զգացին պարսկահայի այդ կարևոր պահանջը և մամուլը հաստատեցին Ն. Ջուղայում։

Սակայն նա չը պսակեց բարերարների յոյսերը. որովհետև նա գերի ընկաւ հոգևոր իշխանութեան ձեռքերում, որը դժբաղդաբար միշտ ենթարկուելով նախապաշարմանց՝ թշնամաբար է վերաբերուել դէպի այդ փարոսը. մինչև անգամ (թէև հաւատալի չէ) ասում են. որ վերջերս Եսայի եպիսկոպոսը դէպի Հնդկաստան ճանապարհորդելուց առաջ, փակել է տպարանի դռները և կնքել։

բարի նպատակով մըցէ դէպի բարին եւ բարձրին յառաջանալու. մանաւանդ որ այժմ ընդարձակ եւ անսահման ասպարէզ է տրուած մեր զրագէտ երիտասարդութեան, ուր նոքա կարող պիտի լինին բարի նախանձով վառուած մըցել եւ առաջանալ.

Ո՜հ թողունք ծուլութիւնն եւ թմրութիւնն եւ մեզ նշանաւոր ընտրենք մըցումն եւ այնպէս առաջանանք։

Բնիաւէ Մ. Գնլոֆեանց

ՍՈԽԱԿԸ

Եւ լուսինը սահում էր
Խաղաղաւէտ թալկահեր,
Մինչ բիւր աստղեր հոյլ ի հոյլ
Սփռում էին վեհ նշոյլ։

Եւ այդ ժամին հմայուն
Փիլոմելայ վեհ թռչուն
Իւր պուրակի մէջ թաղուած,
Կերգէ իւր երգն առ Աստուած։

Եւ իւր զնգզեղն կ՚լսեմ,
Որ լռութեան մէջ վսեմ
Ջինջ եւ պայծառաչիչերում
Դէպ Աստուած է բարձրանում։

Եւ ոլորուն կտրտուն
Արդ ձայնի հետ հմայուն
Սըլանում եմ ես ի վեր
Դէպ ի երկինք սըլանուէր։

«Ո՜վ, դու թռչնիկ տխրունակ,
«Ո՜վ սիրազեղ իմ սոխակ,
«Երգէ՛. երգէ՜ յաւիտեան
«Երգէ՛ սէրն իմ, իմ «իտեան».

«Ցոլնրաբաբաւ այդ զնզեղ՝
«Ո՜հ, վեհ է, քա՜ղցր, սիրազեղ.
«Ցնուր սրախտ այգ յառաջ
«Ո՜ւմ ես ղրկում ընդ առաջ.

«Մ՚ի՞թէ՛ ցաւեր կանխահաւաք
«Աշխարհիս՝ բիւր պատուհասք
«Քո սրտի՞ն աչաչուն
«աուի՞ն իւրեանց մահուան թոյն։

«Ո՜հ, մի՛ սոխակ։ մի՛ տեղար
«Դառն հառաչներ վփտահար,
«Երգի՛ր ուրախ եւ զուարթ
«Մոռացիր սէրդ ու քո վարդ։

«Քո այդ սրտիկ, քո քնար
«Թո՛ղ ապառաժ դառնայ քար,
«Սոխա՛կ, աշխարհ չէ եղեմ
«Ցաւ ու վիշտ է նա դժխեմ։»

Եւ լուսինը սահում էր,
Խաղաղաւէտ, թալկահեր,
մինչ բիւր աստղեր հոյլ ի հոյլ
Սփռում էին վեհ նշոյլ։

Ա. Մաքզարեան

Թէհրան

Հերթը հասաւ Թէհրանին։ Ուսումնասիրող ընկերութիւնը իւր հանգուցեալ հիմնադրի միջոցով կրկին դիմեց հնդկահայերի օգնութեանը. գոհ ենք ասելու, որ Ջաւայի հայերը չը զլացան իւրեանց աջակցութիւնը և քաղաքիս ազգայիններից Դեր. Ղազարոսեանի նիւթական օգնութեամբ մի մամուլ ևս Թէհրանի հայ գաղթականութիւնն ունեցաւ։

Սակայն ցնծութեամբ պէտք է շեշտել, որ այդ մամուլը, ազդեցութիւններից կատարելապէս զերծ, չունեցաւ կապանքներ. նորա գլանները ազատօրէն դարձան և նրա փռէսի տակից դուրս եկան երկու թերթեր։

Մի մամուլ ևս Ատրպատականի առաջնորդ հանգուցեալ Ստեփաննոս Միքիթարեանի օրով և նրա մասնաւոր ջանքերի շնորհիւ Դավրէժ մտաւ։ Սակայն այդ լայն հայեացքների տէր հոգևորականն անգամ չուզեց ազատութիւն տալ նորա կապանքներին. նրան ևս վիճակուեց երկաթեայ վանդակի ձողերով շրջապատուել,

Մի չորրորդն ևս թէև դարձեալ գտնւում է Թէհրանում և որի մէջ տպագրւում է դեռ մի թերթ, սակայն սեփհականութիւն չէ, այլ արքունական պարապ մնացած մամուլներից հ որ նոյն թերթի արտօնատէրը վարձել է և սրանով էլ կնքւում է Պարսկաստանի հայոց մամուլների ցանկը։ Կկարծեմ յարգելի ընթերցողը նկատեց, որ մեր ունեցած մամուլներից միայն մէկն է ծառայում իւր նպատակին, միայն նա՝ որ ազատ է ազդեցութիւնից։

Արդեօք ժամանակը չը հասաւ, որ ժողովուրդը այդ դժբաղդ մեքենաների ազատութիւնը պահանջէ։ Այդ՝ չենք սպասում Ն. Զուղայից որովհետև չենք ուզում նորա ծոյլ երիտասարդութեան ներին վրդովել. բայց իրաւունք ունինք հարցնելու թէ ինչ է անում Դավրէժի երիտասարդութիւնը. ինչու չէ անում իւր արդար պահանջը. ինչու օգնութեան չէ հասնում բանտարկուած մամուլին նրան պէտք է հանել եկեղեցու բակից և հեռու, հեռու մինչև Լիլաւա թաղը քշել, որպէս զի շնչելով ազատ և մաքուր օդ, կազդուրէ իւր թմրած անդամները և ծառայէ իւր սրբազան նպատակին։

Մկրտիչ Բժշկեանց

ՆԵԿՈՅԹՆԵՐԻ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Պիտի զարմանաք երբ լսէք թէ, ներկայ տարուս վերջին քանի երեկոյթների առթիւ՝ ուր պատուաւոր ընտանիքի փոքրիկ սեռին պատկանող մի քանի լուսամիտ և զարգած անդամներ մասնակցած լինելով, տեղի են տուել մեր խաւարամիտ յետադէմասէրներին տեսակ տեսակ կծու դիտողութիւններ և իրենց մութ մտքին արժան՝ զաւեշտալին լրբախօսութիւններով զուարճանալ։

Վերջապէս խլուրդներից մէկը հարցնում է մի նշանաւոր անձնաւորութիւնից թէ ձեր տալիք երեկոյթի յաջողութիւնն որ հրեշտակից է կախուած՝ մեր պարոնը չհասկանալով այդ անհամ՝անհոտ զուարճախօսութիւնը՝ բացադրութիւն է խնդրում և ստանում է այսպէս մի պատասխան թէ, այնինչ երեկոյթի հրեշտակները Դ.... եանցի կինը և քոյրերնեին, այսինչ հանգէսինը պիտի լինի (անամօթ զրպարտութիւն) Մ...'անցի էջը իսկ ձեր հանդէսի հրեշտակն ով պիտի լինի։ Թէ այս տգէտ և խաւարամած խօսքերին ինչ էր պատասխանել մեր պարոնը՝ հրապարակաւ բացելու մատդիր չեմ... բայց և այնպէս այդ խլուրդներին մի քանի խօսքով էլ պատասխանելու չպիտի ուշանամ ես։

Անցաւ, այո՛ անցաւ այն դժոխալին ժամակը, այն խաւար դարն, ուր կինն ընդունուածէր իբր գերի և զրկուած մարդկային բոլոր իրաւունքներից, և ուր նա նկատւում էր անխօս անասուն, ունենալով մի զերոի նշանակութիւն իւր ամբողջ գոյութիւնովը, և ուր նա վերջապէս նկատւում էր լոկ զուարճութեան առարկայ անասնացած վավաշտներին՝ իսկ այսօր, ազատութեան և գիտութեան լոյսը՝ կենդանութիւն է ներշնչել նոյն վաղեմի և դարաւոր անզգայ և դիակնացած իգական սեռին, այժմ նա ձգտում է հրապարակ դուրս գալ իւր իրաւունքները պաշտպանելու, փափուկ զգացումներն արտայայտելու, ազդօգուտ և հանրօգուտ ձեռնարկներին նուիրուել իբրև կատարեալ արարած և խաւարասէր խլուրդներին ծանօթացնել իրենց պակասութիւններին։ Այս դէպքում նոքա հարկաւ հրեշտակներեն՝ որոնց համարձակ ներկայութիւնից և լուսասփիւռ խօսքերից փախուստ պիտի տան հարեմական կեանքին հարազատ որդիք և խաւարի մէջ ծնուած ու արծաթի ժանգով սնուած խորամանկ սատանաներ և վայրախօս ճիւաղները։

Ինչու, միթէ տգիտութիւն չէ երգիծարանօրէն վերաբերուիլ այն վսեմ և բարձր նպատակներին և սկզբունքներին, որին նուիրւում է մի ամբողջ ընտանիք, թափելով իւր բոլոր ճիգ և ջանք, թէ բարոյապէս և թէ նիւթապէս։ Այսպիսի անձնուիրութեան դէմ խօսել նշանակում է սկզբունքի բռնաբարում, բարին և գեղեցիկին հակառակել, բարերարին նենգել որոնք վատթարագոյն են քան մարդասպանութիւնն։

Բայց չենք էլ մոռանում ասելու նաև, ամեն մի արարած՝ ըստ իւր գիտութեան է խօսում որով այսպիսի զաւեշտական դիտողութիւնները միայն հին և փտած ու քայքայուած գաղափարներին է վերագրելու...

Այդպիսի ուղեղների մէջ մտցնել թէ կինն է միայն մարդկային ընկերութեան ծնունդ տուող և թէ նա էլ իւր բարձր իրաւունքներն ունի՝ նշանակում է ապառաժների վրայ ցորեն սերմանել և թէ պահանջել այդպիսիներից կատարեալ հասկացողութիւն նմանումէ ծեր և զառամեալ մի ներքինիից հայրական գորով և ընտանեական սէր պահանջել, ուստի պարզ ասենք թէ, մենք այդ խլուրդներից ոչինչ չենք սպասում, որովհետև վստահենք որ մեռածը մեռած է, որոնց յարութիւն և վերակենդանութիւնը Քրիստոսի ներկայութեան է կարօտում։

Իսկ մեր ուրախութիւն այն է որ ներկայ լուսամիտ և զարգացած երիտասարդութիւնը գնահատում է այդ ձեռնարկներ և հրեշտակների նեղութիւն ու անձուիրութիւնն։

Համոզուած ենք որ թէ և միշտ տգէտը գիտունին, վատը լաւին, հինը նորին և վերջապէս խաւարը լոյսին հակառակ գործել և մաքառելով են կատարում իրենց շրջանը, բայց յաղթութեան պտուկը միշտ վերջիններին է եղել ուստի թող իմանան մեր խաւարասէր ծաղրաբան և հարեմական հոտած կեանքին նուիրուածներ որ իրենց անուանած հրեշտակներն այդպիսի կծու և անհամ խօսքերից չպիտի վհատին, չպիտի յուսահատին այլ ամեն մի առիթից օգտուելով անձնուիրաբար պիտի մասնակցին այն ամեն ձեռնարկներին որ կլինին յօգուտ և 'ի նպաստ ազգի և հանրութեան, իրենց հրեշտակային ներկայութիւնովը պիտի ջանան ամօթահար անել հնադարեան հեշտամոլ կեանքին հետևող խաւարային խլուրդներին.....

Մենք և մերայինք ասում է հրեշտակներից մէկը մեր վսեմ նպատակին և բարձր սկզբունքներին պիտի ծառայենք, թողնելով այդ ժանգամոլ խլուրդներին՝ խաւարային թանձր մթութեան մէջ փնտռել իրենց վաշխառութեան անմեղ զոհերին, քանզի այդ է միայն դորանց միակ արուեստ, հասկացողութիւն, բարոյականութիւն և ամբողջ գոյութիւն...

Սոկրատ Մ. Գելոֆեանց

„ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ" ՓԱՑԼԸ

Պարսկա-Հայ Եղբարք

Վաղուց մեր փափագած իղձը կատարուեցաւ „Աստղի" հորիզոն բարձրանալով. մենք ունենք այժմ Իրանում մեր սպասած օրգանը, որի դրոշի տակ համախմբուելով պիտի վայելենք մեզ սիրելի արդիւքները։ „Աստղի" փայլը իւր աղբիւրը մեզնից ստանալով՝ պիտի անդրադարձնի նորան այն չափով, որ չափով մենք անապակ անկեղծ նիւթ կը մատակարարենք, որ չափով մեզ սիրելի, մեր սրտին մօտիկ կլինի գեղեցիկ ճաշակը։

Առանց շողոքորդելու մեր սիրելի Աստղին՝ հրապարակ դնենք մեր բարոյական ուժերը, լարենք այդ ուժերն՝ ձեռք ձեռքի տալով ընթանանք նորա գծած ու գծելիք ուղիներով. ուղիներ՝ որոնց մէջ ենք գտնելու մեր երազների մի մասի իրականանալը՝ որոնց բարձրութեան ծաւալումն է ծաւալուելու Իրանի հայոց մէջ ճշմարիտն ու բարին։

Անձնական գծուծ հաշիւներն ու համբակութիւնը, տպագրական խօսքին եսական զոյն տալը՝ նորա մէջ երբէք չպիտի կարենան մուտ գտնել լինենք նորա եւ այսպիսի մենք վստահ Շուտ մ.ը հասարակակա շահերին նուիրուելուն՝ մեր սրտի ջերմ յարաբերութեան մէջ մտնելուն։

Երկնում ենք մեր խօսքը՝ Աստղ-Արեւելեանի փայլի չափը մեր ձեռին է, ինչներս ենք ներկայումս նորա փայլով. անկեղծ ու եղբայրաբար ողջունելով նորա ասպարէզ դուրս գալը մենք եւս ասպարէզ հանենք սեր մտաւոր ու նիւթական միջոցները, գրկելով նորան- մեր իղձը՝ շարունակ մեր առջեւ թող նկարուած լինի„ ծանիր զքեզ" ընտիր ոսկեղէն համարը։ Այլապէս՝ մեր յոյսերը չեն իրականանալ նախ, ու գործ դրուած միջոցները աշխատանքը եզուր կկորչին ապա։

Ցոյներս մենք ենք, նորա արդիւնքը նոյնպէս բարձր ունենք մեր Աստղ աւաստ հիմ մասանալանէ նորա փայլն ու ազդեցութիւնը միշտ մեզ հետ կլինի։

Սալմաստ

Հայ

ԹԷՀՐԱՆԻ ՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Թումանեան եղբարք՝ միշտ պատրաստ են այնտեղ ուրտեղ բարեգործութիւններ անելու պէտք կայ դա արդէն առածի կարգում է անցել. յիշում եմ դեռ վերջերս պ. Վարդան Թումանեանց Պարսկաստան եկած ժամանակ նրը Ռէշտից անցնում էր այցելեց այնտեղի Հայոց երկսեռ վարժարանն եւ խոստացաւ այն անյարմար շէնքն հիմքից փոխել եւ իւր հանգուցեալ մօր յիշատակին նոր մի վարժարան կառուցանել այնտեղ։ Այդ տեսակ ազնիւ սրտերը շատ է արտադրել Թումանեան անուն։ Վերջերս այստեղ էլ դարձեալ այդ անուանը հուանաւորութեամբ մի Սէր Ընկերութիւն կազմուեցաւ, որի նպատակն էր (ինչպէս յայտնում են առաջին անգամ այդ ընկերութեան մէջ մտնողները) քարեսէր անձանց նուէրներով մի դրամագլուխ կազմել, նորա տոկոսով Թէհրանի մէջ գտնուող հայոց վարժարանների առօրեայ ծախքերն լեցնելու համար։ Շատ գովելի, շատ քարեսիրական մի ձեռնարկ է դա։ որովհետեւ վարժարանն կրթելով մանկանց ազգի ապագան է պատրաստում։

Բայց ի՞նչ եղաւ այդ ընկերութիւնը, նրա կազմութեան ժամանակ՝ մաղթանքների եւ բաժակաճառների ժամանակ երբ նուիրատուութեան թուղթը սեղանի վերայ գլորուեցաւ՝ ինչպէս եռանդով եւ ոգեւորութեամբ գրեցին ստորագրեցին եւ գեղեցիկ մի գումարի հասցրին նորակազմ Սէր ընկերութեան դրամագլուխը բայց ո՞ւր մնաց նրա ժողովելը եւ գործադրութեան մտցնելը։

Լսում ենք (չենք գիտեր որքան ճշմարտութիւն ունի) որ „Սէր" ի թեւերն ծալլել եւ սահմանափակել են աւելի նրա թոիշը. այդ ընկերութիւնը իւր սէրը ցոյց պիտի տայ միայն Ղազվինայ թաղի Հայկազեան երկսեռ վարժարանին. Դուվլաթայ թաղի հայկական վարժարանին եւ հայուհեաց ընկերութեան օրիորդաց վարժարանին այդ ընկերութիւնը մերժում է իւր սէրը, ինչու.... չենք գիտեր։ Եւ այս անորոշ հարցու պատասխանն է որ մեզ անհաւատալի է դարձնում այդ տարածուած լուրը։ Սէրը ստեղծուել է խղճութիւնը մէջտեղից վերցնելու համար. բայց եթէ սէրը ինքը իւր կազմութեան մէջ խղճութիւն մտցնէ ինչ անուն պէտք է տալ նրան .....

Այս մասին զրգռուած մտքերն հանգստացնելու համար պիտի խնդրէինք գործին աւելի մօտից տեղեակ եղողներից որ բարեհաճէին մեր թերթի կամ ուրիշ միջոցով բացատրութիւն տալ։

Պարսկաստանցի մեծանուն վաճառականները որոնց գործակալութեան ճիւղերն տարածուած են Պարսկաստանի ամեն քաղաքներում, ինչպէս նաեւ Ռուսաստանում։

Ծ. Թ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի Խմբագրութիւն „Աստղ-Արեւելեանի“

Հաճեցէք այս քանի տողս տեղաւորել Ձեր էջերից մէկի անկիւնում։

Ամէն տեղից և ամէն հասնողը մեզանից հարցնում է թէ, յօգուտ սովեալներին տեղի ունեցած երեկոյթի հասոյթն ինչքան և ինչ եղաւ։

Ցաւում եմ ասել, որ մեր հանգիստականներից շատերի թոյլութիւնը մեզ թոյլ չի տալիս մի կատարեալ և վերջնական հաշիւ տալու, որովհետև շատեր կան որ մինչև այսօր էլ իրենց տոմսակների փողը չեն վճարել իսկ կան այնպիսիներ էլ, որոնց՝ մասնաժողովն պատիւ անելով ծրարած տոմսակներ ուղարկեց, բայց այդ պարոններն էլ փոխարէնը կամ վճարելու և կամ տոմսակները քաղաքավարութեամբ դարձնելու (զարմանալին այն է որ սորանցից մի քանիսն էլ կրթուած և հասկացող տիկին և Ամերիկացի օրիորդներ են) այսօր մեզ յանդիմանում էք, թէ մենք երբ տոմսակ ունեցինք որ ուղարկել էք և այլն....

Առ այժմս այնքան կարողենք ասել թէ մինչև հիմայ 40 թուման (հակառակ վատակամների հրապարակաւ արած գուշակութեան) հաւաքուել են և սպասում ենք, որ մնացածն էլ գանձուի որպէս զի ժամանակին յանձնենք ում որ պէտք է։

Գանձապահ

Սուքիաս Մ. Գելոֆեանց

„Աղջկան ինչ պէտք է ուսումը, քոհանայ պիտի դառնայ թէ վարդապետ„: Այսպիսի խօսքեր դեռ լսում ենք տգէտ հասարակութիւնից։ Դա ապացոյց է, թէ նոքա որքան նեղ հայեացքներով են վերաբերւում դէպի աղջիկը-դէպի մայրը։

Գէթ մի րոպէ չեն ուզում մտածել որ այդ տկար արարածն է որ ստեղծում է մի ժողովուրդ, որ կերտում է ազգեր։ Դրանց աղնիւ ձեռներին յանձնեց Արարիչը մարդկութեան ճակատագիրը, բաղդը, երջանկութիւնը և դրանց՝ ուղեց ճանաչել միակ պատասխանատու ամեն մի ցաւալի արկածի համար։ Այո, և դրանց հրամայեց «մարդին բարձրացնել այն գիրքի վերայ, որ արժանի լինի իւր պատկերը կրելու»։

Ուրեմն մի էակ, որ ծանրաբեռնուած է այդքան բազմաթիւ պատասխանատուութիւններով որքան ուշադրութիւն, խնամք և հոգ է պահանջում նորա մշակութիւնը. որքան ջանք և զոհողութիւն է պէտք. նրան՝ իւր սրբազան կոչումին արժանի դարձնելու համար։

Օրերս մի փոքրիկ մանկան արտաքոյ կարգի կորուստը, գալիս է ապացուցանելու, թէ որքան յետ են մնացել մեր մայրերը այդ կոչումին արժանանալու խրատունքից։ Ծխիտութեան զոհիկը լաց է լինում, ոչ մի միջոց չեն խորհում որով բաւականութիւն տալ կարողանային մանկան, եթէ ոչ զարհուրելի ձայներով երեխան վախցնել։ Երկիւղի ազդեցութեան տակ դժբաղդ արարծը լիրաւ թ լռում է, և փակում իւր սիրուն աչիկները, սակայն յաւիտեան լռելու պայմանով։ Նրա անմեղ հոգին սլանում է դէպի Յաւիտենականի աթոռը, բողոքելու խաւարի և տգիտութեան դէմ.

Եւ որքան այսպիսի բողոքներ կան ժողովուած այնտեղ։

Հրանդ

4 Յունուար 1896

Բ. ընկերութեան Մասնաժողովն պատիւ ունի յայտարարելու արգոյ հասարակութեան թէ 'ի նպաստ Հայկական վարժարանին շրջաբերութեան հանած վիճակահանութիւնն պիտի քաշուի վերջնականապէս ներկայ Յունվար 28 ին (հին տոմար) նոյն վարժարանի սրահում կէսօրից 2 ժամ անցած։

Փափագողք կարող են դիմել Թեհրանում Պ. Ղուկաս Բարսեղեանին մնացեալ տոմսակներից գնելու համար։

Տոմսակի գինն՝ 5 ղրան

Շահող թիւերն՝ 3 են

1 թիւ 500 ղրան

1 „ 300 „

1 „ 200 „

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ջուղայից մեզ գրում են թէ ժամանակի անհարմարութեան պատճառով Կաղանդի գիշերը տրուելիք ներկայացումն յետաձգուել է և Իսֆֆի Ընթերցասիրաց ընկերութեան սրահում պարզ մի հանդէս է միայն տեղի ունեցել։

Լսում ենք, որ հասարակութեան մէջ կան մարդիկներ, որոնք մանր կամ խոշոր դիտողութիւններ ունին Աստղ-Արեւելեան թերթի նկատմամբ։ Որքան ուրախ կլինէինք, եթէ դրանք գրաւոր լինէին և մեզ ղրկուէին օր առաջ, մենք կարող կլինէինք օգուտ քաղել դրանցից, եթէ բանաւոր փաստերի վրայ լինէին հիմնուած և թող հաւատացած լինին՝ որ այդպիսիների անունն ևս թերթիս բարեկամների ցանկի մէջ մի որոշ տեղ պիտի բռնէ, որովհետև մեր բարեկամները նրանք են, որոնք մեր սխալը մեր երեսին կխփեն։

Նոր տարին ուրախութեամբ տօնուեցաւ Ուսումնասիրաց Ընկերութեան Հայկական վարժարանում։ Աշակերտներին ընծաներ և քաղցրեղէն բաժնուեցաւ և ազգասիրական երգերով վերջ դրուեցաւ այդ ընտանեկան հանդէսին, ուր ներկայ էին նոյն խնամակալ ընկերութեան անդամներն։ Ապա նրանք այցելեցին Հայուհեաց ընկերութեան օրիորդաց վարժարանն, ուր նրանցից շատերն՝ նորակազմ ընկերութեան նուիրատուապէս օգնեցին առատ և սրտաբուղխ նուէրներով։

Այս բարեսիրական քայլը մեզ առիթ է տալիս հրապարակաւ յայտնելու մեր ուրախութիւնն և յոյս ունինք որ նրանց առատաձեռնութիւնն օրինակ պիտի լինի քաղաքիս Հայ հասարակութեան աղջկանց դաստիարակութեան գործը միշտ հիմնաւոր պահելու և յառաջացնելու համար։

Ամսիս 7 ին ղավինայ թաղի Հայկազեան վարժանում էլ տօնեցին Կաղանդի և Ծննդեան տօներն և այդ առթիւ աշակերտներն և աշակերտուհիներն փոքրիկ ընծաներ ստացան։

Լսեցինք թէ մօտ օրերս, Համադաբադ թաղի՝ Բողոքականաց եկեղեցում տեղի պիտի ունենայ մի երեկոյթ. թէև ժողովրդի համար ձանձրալի է մէկը միւսին անմիջապէս յաջորդող երեկոյթների մի անվերջ շարքը. բայց և այնպէս ուրախութիւն է պատճառում նոցա ազգօգուտ նպատակը. իսկ՝ մի կարևոր բան որ շատ է աչքի առնում, այն է որ, մինչև այսօր տեղումս տրուած բոլոր ազգօգուտ երեկոյթները եղել են նախաձեռնութեամբ Բողոքական երիտասարդների, ապա ինչ է անում մեր լուսաւորչական երիտասարդութիւնը, արդեօք քնել է նա թէ զբաղուել է յօգուտ գրադարանին տրուած երեկոյթի 130 թուման հասոյթի պաշտպանութեամբն..... և կամ թէ օդային պալատներ շինելով.....

Ինչ և է առ այժմ մենք խորհուրդ պիտի տանք միայն, յառաջիկայ երեկոյթի ձեռնարկողներին որ, նախ զգուշանան հասարակութիւնը ձանձրացնող և ջիղեր թմրեցնող անհամ անճոռնի և անյարմար կտորներ կարդալուց (ինչպէս արեցին վերջին անգամ). որովհետև երեկոյթը ոչ նշանակում է դպրոցական դասախօսութիւն (ինչպէս անցեալ անգամ կարդացած Արաբներ և իրենց երկիր՝ անվերջ գրուածը) և ոչ էլ կամաւոր բանդ... և ապա սրահի կարգապահութիւնը յանձնեն այնպիսի անձնաւորութիւնների որ հանդիսականներին չանպատուեն. իսկ ի լրումն սորանց լաւ կանեն եթէ իրենց տուած հինգ երեկոյթների էլ հաշիւը տան հասարակութեան. որովհետև հասարակութեան անունով ձեռնարկուած գործերի հաշիւը հասարակութեան պիտի տալ, և ոչ թէ ամեն ինչ վարագուրի տակ ծածկել։

Յունուար 5 ից 6 ի գիշերն վարպետ գողեր Թումանեան եղբարց տեղիս գրասենեակի տանիքը ծակելով ներս են մտել և երկաթեայ մեծ սնտուկը կոտրելով 3,600 թումանի չափ դրամ են գողացել։

Աստղ-Արեւելեանի ներկայ համարը Ծննդեան տօների պատճառով երկու օր իւր ժամանակից ուշ ենք հրատարակում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արծագանքին Շուշուց գրում են թէ անյայտ աւազակներ յարձակուելով Ցիլիս գիւղի ծխատէր քահանայի տան վրայ, սպանել են նրան, վիրաւորել կնոջը եւ տունը կողոպտելով փախել։

Մշակում կարդում ենք թէ այս օրերս պաշտօնապէս յայտարարվեց մինիստրների կոմիտէտի Բ. հաւանութիւն գտած որոշումը՝ հիմնել Թիֆլիսում մանկավարժական իգական սեռի համար մի կրթական փակ հաստատութիւն, հիւզանեայ կուրսով։

Դրա համար պէտք պիտի լինի ծախսել տարեկան 50,000 ռուբլի որի 15.000 ը կառավարութիւնն է տալիս, իսկ մնացեալ 35,000 ն մասնաւորական ազգաբնակութիւնն ինքը պիտի հայթայթէ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՅԹԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Հռովմ 14. Աբիսինեայից հասած գրերն տեղեկացնում են, թէ Իտալական զորքը, Մաքալէսում՝ յաջողութեամբ ցրուեցին Շաոններին։

Լօնդօն 15. Մեքոնգի խնդիրը շուտով կարգադրուելու վրայ է, որովհետև Բրիտանեան մտադիր է, Մեքոնգի արևելեան (վիճաբանութեան առարկայ եղող) հողը տալ Ֆրանսային։

Լօնդօն 17. Չորեքշաբթի օր Սիամում՝ մի անգլօ ֆրանսական դաշնագիր կնքուեցաւ, որով Մեքոնգը դառնում է Ֆրանսական Չինա-սահմանը։

ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Թեհրան. Օրիորդ Բ. և Տիկին Կ. Գելոֆեաններին։

Ձեր մասնաւոր նամակներով խոստանում էք աշխատակցել Աստղ-Արեւելեանին եթէ «հաճինք ընդունել»։ Հաճինք ընդունել. Ձեր այդ առաջարկը միթէ կարելի է ցնծութեամբ չողջունել. Ձեր աշխատակցութիւնը մեզ մի օժանդակութիւն լինելէ զատ. ունի և այն բարոյական առաւելութիւնը որ պիտի վտարէ մեր միջից վհատութիւնը և ներշնչէ մեզ քաջալերութիւն. երբ ամեն անգամ մտաբերենք թէ այդ փշալի ասպարիզում մենակ չենք, մեզ հետ է և Հայ կինը, դրանով դուք փորձում էք խորտակել այն անջրպետը, որ նախապաշարումը և խաւարը կանգնեցրին Հայ տղամարդի և Հայ կնոջ մէջտեղ և հեռացրին նրան, հասարակային կեանքից։ Այսօր տեսնում ենք որ նա կենդանութեան նշոյլներ է ցոյց տալիս ձգտում է բարձրանալ իւր անկեալ դրութիւնից, թօթափել դարերի փոշին և պահանջել իւր սեփ իրաւունքները։ Իսկ մենք մխիթարուած՝ յաջողութիւն ենք մաղթում նրան։

Հաֆթուան ձայնին։ Շնորհակալութեամբ ընդունում ենք Ձեր առաջարկը կարդացէք ներքին տեսութեան մէջ մեր թղթակիցների և գործակալների համար գրուածը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՀԱԿԱՌԱԿ ՎԵՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Լռութիւնը՝ մէկն ասում է թէ համաձայնութեան նշանէ իսկ միւսը՝ յիմարներին պատասխան։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝

Աստղ-Արեւելեան Ընկերութիւն

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Մակար Կ. Մակարեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

LIBRAIRIE BARNEOUD

Teheran

Մ. Բառնէուի գրավաճառը Թէհրանում, պատիւ ունի յայտնելու թէ իր գրավաճառանոցում գտնւում են ամեն հասակի եւ ճաշակի յարմար գրքեր ամեն լեզուով գլխաւորապէս զաղղիերէն. վայելչագրութեան պիտոյքներ եւ այլն։

Արժէքներն շատ աժան են եւ ամենքն մատչելի. դիմել վերոյիշեալ զաղղիերէն հասցէին։

10 — 1.

Զաւա-Հայ Տպարան